

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՊԵԿ-ԳԿԾՁԲ-2020/14-3**

ք.Երևան

«28» 12 2020թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գարանտսերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Մ.Նիկողոսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ավտոմեքենաների պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկագման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկագնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 17 300 000 (տասյոթ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 7.15 կետով կնքվելիք համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5՝ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:²¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը

²¹ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար

հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 39 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հարկադրված ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում, ապա պայմանագիրը լուծվում է:

ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:²⁵

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
 ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
 ՀՎՀՀ 02647057
 Հ/Հ 900011054013
 ՀՀ ՖՆ աշխատակազմի
 գործառնական վարչություն
 Գլխավոր քարտուղար

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Գարանտերվիս» ՍՊԸ
 Հասցե՝ ք.Երևան, Թիբլիսյան խճ 20
 ՀՎՀՀ 00840437
 Հ/Հ 193004674290
 Բանկ՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ

Է. Գևորգյան

[Handwritten signature]
 /ստորագրություն/



Մ. Նիկողոսյան



²⁵ Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի փաստապահիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ՓԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ պետական եկամուտների կտրիքների կարիքների համար ավտոմեքենաների պահպանման ծառայությունների

Տրանսպորտային միջոցների մակերիշները (տեսակները)՝ ըստ չափաբաժինների			
6-րդ չափ.	11-րդ չափ.	12-րդ չափ.	13-րդ չափ.
SU-1 (տեխնիկական գնման/դիագնոստիկա) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քայլոցների և այլ օժանդակ նյութերի անվանումները	Հյունիայի H1, /2010թ/	Գազ-A63R42, Գազ-A21R22, Գազ- 27840B, Գազ-22177, /2015թ/	Տոյոտա Կորոլա 1.3, 1.4, 1.6 /2010, 2011թ/ Տոյոտա Կորոլա 1.3, 1.6 /2013թ/
CPV	5011170/535	5011170/540	5011170/541 5011170/542
SU-1 ներառվող ծառայությունների անվանումները			
Բոնկման համակարգի ստուգում	3,000	3,000	3,000
Սարքեման համակարգի ստուգում	3,000	3,000	3,000
Յուղման համակարգի ստուգում	3,000	3,000	3,000
Արտաձման համակարգի ստուգում	3,000	3,000	3,000
Կցորդման համակարգի ստուգում	3,000	3,000	3,000
ՓՏ-ի աշխատանքի ստուգում	3,000	3,000	3,000
ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	3,000	3,000	3,000
Կրողամային փրկանցման տուփի ստուգում	3,000	3,000	3,000
Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	3,000	3,000	3,000
Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	3,000	3,000	3,000

Աղջկի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
ABS համակարգի ստուգում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
Թափքի վիճակի ստուգում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
SU-2 ներառվող ծառայությունների անվանումները						
1. Շարժիչ						
Շարժիչի հանում և տեղադրում	50,000	50,000	40,000	40,000	40,000	40,000
Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	210,000	150,000	160,000	160,000	160,000	160,000
Շարժիչի բարձրիկի հանում և տեղադրում	8,000	6,000	6,000	6,000	6,000	6,000
F/լիստեր կախարիչի հանում և տեղադրում	10,000	10,000	10,000	10,000	10,000	10,000
Շարժիչի բոլկի գլխիկի հանում և տեղադրում	45,000	34,000	25,000	25,000	25,000	25,000
Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	20,000	15,000	20,000	20,000	20,000	20,000
Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և խտաբուկերով 1 կ-տ	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
Վառոցքի մոմի բնիկի նորոգում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
Շարժիչի փականների գապանակների փոխարինում	1,000	1,000	1,000	1,000	1,000	1,000
Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	1,000	1,000	1,000	1,000	1,000	1,000
Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
Շարժիչի մխցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրանքների փոխարինում	20,000	20,000	20,000	20,000	20,000	20,000
Ծնկան լիսեդի հղկում	20,000	20,000	20,000	20,000	20,000	20,000

Ծնկանն լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000	15,000	15,000	15,000
Ծնկանն լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	15,000	15,000	15,000	15,000	15,000
Ծնկանն լիսեռի առամաննիսի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
Ծնկանն լիսեռի ուղղում	13,000	13,000	13,000	13,000	13,000
Ծնկանն լիսեռի առջևի խցուկի փոխարինում	7,000	7,000	7,000	7,000	7,000
Ծնկանն լիսեռի հետևի խցուկի փոխարինում	15,000	15,000	15,000	15,000	15,000
Շարժիչ բլոկի փոխարինում	60,000	65,000	75,000	75,000	75,000
Շարժիչ գանի փոխարինում (ռոտորեա)	15,000	15,000	15,000	15,000	15,000
Մխոցի փոխարինում 1 հատ	15,000	15,000	15,000	15,000	15,000
Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	20,000	20,000	25,000	25,000	25,000
Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
Բաշխիչ լիսեռի խտավուկի փոխարինում	2,000	2,000	2,000	2,000	2,000
Փոկանիսի փոխարինում	2,000	2,000	2,000	2,000	2,000
Շարժիչ առամանավոր փոկի փոխարինում	25,000	20,000	20,000		2,000
Շարժիչ շղթայի փոխարինում	40,000	40,000	40,000	40,000	40,000
Շարժիչ քարտերի նորոգում (եռակցում)	2,000	2,000	2,000	2,000	2,000
Շարժիչ քարտերի միջադիրի փոխարինում	2,000	2,000	2,000	2,000	2,000
Շարժիչ քարտերի հանում, տեղադրում մաքրումով	7,500	7,500	7,500	7,500	7,500
Շարժիչ յուղի մղիչի փոխանակում	10,000	15,000	15,000	15,000	15,000
Շարժիչ յուղի մղիչի նորոգում, մաքրում	5,000	5,000	5,000	5,000	5,000
Շարժիչ յուղի մղիչի մաքրում	2,000	2,000	2,000	2,000	2,000
Ցուղի ծորակի փոխարինում	2,000	2,000	2,000	2,000	2,000
Օդաքաշակ փողակի փոխարինում	2,000	2,000	2,000	2,000	2,000
Բ/լիսեռի կախարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000	15,000	15,000	15,000
Շարժիչ կախարիչի միջադիրի փոխարինում	15,000	15,000	15,000	15,000	15,000

Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	25,000	25,000	25,000	25,000	25,000
Շարժիչ կափույրի փոխարինում	15,000	15,000	15,000	15,000	15,000
Շարժիչ կափույրի միջադիրի փոխարինում	15,000	15,000	15,000	15,000	15,000
Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ	15,000	15,000	15,000	15,000	15,000
Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ	15,000	15,000	15,000	15,000	15,000
Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում	7,000	7,000	7,000	7,000	7,000
Ստամանիվի փոխարինում	4,000	4,000	4,000	4,000	4,000
Ստամանավոր փոկի պայտանի փոխարինում	10,000				
Սովսարիկի փոխարինում 1 կ-տ	7,000	7,000	7,000	7,000	7,000
Շարժիչի հանդարտիչի փոխարինում	13,000	13,000	13,000	13,000	13,000
Շարժիչի փոկի հողվակի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
Շարժիչի հողվակի առանցքակալի փոխարինում	2,500	2,500	2,500	2,500	2,500
Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	7,500	7,500	7,500	7,500	7,500
Շարժիչի յուղի արանքաչափի (FSS) իրանի փոխարինում	2,000	2,000	2,000	2,000	2,000
Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	8,000	8,000	8,000	8,000	8,000
Շարժիչի գամասեղի փոխարինում	1,500	1,500	1,500	1,500	1,500
Գլխիկի հեղույսի փոխարինում	1,500	1,500	1,500	1,500	1,500
Ծնկաձև լիսեռի հեղույսի փոխարինում	1,500	1,500	1,500	1,500	1,500
Շարժիչի էլեկտրական համակարգի հանում և տեղադրում	26,000	26,000	26,000	26,000	26,000
Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	15,000	15,000	15,000	15,000	15,000
2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ					
Ցուղի և յուղի գոտիչի փոխարինում	1,000	1,000	1,000	1,000	1,000
Ավտոմեքենայի յուղում	1,000	1,000	1,000	1,000	1,000
Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացմամբ	4,000	4,000	4,000	4,000	4,000

Յուրի պումպի փոխարինում	15,000	20,000	22,000	22,000
Յուրի ռադիատորի փոխարինում	15,000	15,000	15,000	15,000
Յուրի ռադիատորի նորոգում	5,000	5,000	5,000	5,000
Շարժիչի կոնկետորի փոխարինում	15,000	15,000	25,000	15,000
Շարժիչի կոնկետորի միջադիրի փոխարինում	10,000	10,000	10,000	10,000
Վառուցքի մոմի փոխարինում 1 կ-տ	2,000	2,000	2,000	2,000
Վատելիքի նուրբ մաքրման գտիչի փոխարինում	7,000	10,000	7,000	7,000
Օդի գտիչի փոխարինում	1,000	1,000	1,000	1,000
Սրահի օդի գտիչի փոխարինում	2,000		2,000	2,000
Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	9,000	7,000	9,000	9,000
Օդի գտիչի փողոկալի հանում և տեղադրում	2,500	2,500	2,500	
Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	4,000	3,000	4,000	4,000
Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	4,000	3,000	4,000	4,000
Բոցամուղի կողավորում	7,000	7,000	7,000	7,000
Ինժեկտորի բոցամուղի խտաբուկների փոխարինում	2,500	2,500	2,500	2,500
Բենզամիչի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000
Վատելիքի կոշտ մաքրման գտիչի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000
Վատելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000	5,000	5,000
Բռնվման կարգավորում	5,000	5,000	5,000	5,000
CO կարգավորում	5,000	5,000	5,000	5,000
Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	18,000	15,000	20,000	20,000
Ղեկավարման բլոկի վերանորոգում	25,000	20,000	25,000	25,000
Վատելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000	15,000	15,000
Վատելիքի բաքի մաքրում	7,500	7,500	7,500	7,500
Օդի ծախսի տվիչի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000

Ջրի ջերմաստիճանի տվյալի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
Ջրի խորովակի, փողոսակի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
Բենզոգրաֆի բենզամոլիչի ցանցի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
Բենզոգրաֆի բենզամոլիչի ցանցի մաքրում	2,000	2,000	2,000	2,000	2,000
Յուղի ճնշման տվյալի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
Տվյալի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
3. Սառեցման և արտաձման համակարգ					
Հովիտարի հանում և տեղադրում կամ փոխարինում	11,000	10,000	10,000	10,000	11,000
Հովիտարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
Ռադիատորի նորոգում	15,000	15,000	15,000	15,000	15,000
Շերտափեղկի փոխարինում	10,000	10,000	10,000	10,000	10,000
Շերտափեղկի կառավարման ձգածողի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
Ընդարձակող բաքի փոխարինում	2,000	2,000	2,000	2,000	2,000
Ընդարձակող բաքի փողոսակի փոխարինում	2,000	2,000	2,000	2,000	2,000
Ջրի ծորակի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
Հովացման համակարգի ռեռինե փողոսակի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
Հովիտարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000	15,000	15,000	15,000
Վատարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ներառյալ	30,000	20,000	20,000	30,000	30,000
Վատարանի ռադիատորի նորոգում	20,000	20,000	20,000	20,000	20,000
Վատարանի շարժիչի փոխարինում	20,000	20,000	20,000	20,000	20,000
Թերմոստատի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
Ջրի մոլիչի փոխարինում միջադիրով	20,000	20,000	20,000	25,000	25,000
Ջրի մոլիչի միջադիրի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
Գեներատորի փոկի փոխարինում	8,000	8,000	10,000	10,000	10,000

Գեներատորի փոփոխ ձգող հողովակի փոխարինում	8,000	6,000	8,000	8,000
Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	8,000	15,000	8,000	8,000
Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	10,000	15,000	10,000	10,000
Խլարարի անուրի (xայր) փոխարինում	1,000	1,000	1,000	1,000
Խլարարի ներդիրի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000
Խլարարի կախոցի փոխարինում	2,000	2,000	2,000	2,000
Հովացման հեղուկի փոխարինում	3,000	3,000	3,000	3,000
4. Կցորդում և ՓՏ				
Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	25,000	25,000	25,000	25,000
Աշխատանքային կամ գլխ. գլանի նորոգում	25,000	25,000	25,000	25,000
Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	35,000	35,000	35,000	35,000
Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000	15,000	15,000
Կցորդման ճուպակի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000	15,000	15,000
Կցորդման փողակի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	15,000	15,000	15,000
Կցորդման երկմանի փոխարինում	15,000	15,000	15,000	15,000
ՓՏ-ի հիմնական նորոգում	135,000	135,000	135,000	135,000
ԱՓՏ-ի հիմնական նորոգում			150,000	150,000
ՓՏ-ի հավաքածուի փոխարինում	35,000	35,000	35,000	35,000
ՓՏ-ի արջևի խտաբուկի փոխարինում	15,000	15,000	15,000	15,000
ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	15,000	15,000	15,000	15,000
ՓՏ-ի հանում և տեղադրում	40,000	40,000	40,000	40,000
ԱՓՏ-ի հանում և տեղադրում			65,000	65,000
ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	15,000	15,000	15,000	15,000
ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	25,000	25,000	25,000	25,000
ՓՏ-ի առամանիկի փոխարինում	25,000	25,000	25,000	25,000

ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	25,000	25,000	25,000	25,000	25,000
ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	25,000	25,000	25,000	25,000	25,000
ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	35,000	35,000	35,000	35,000	35,000
ՓՏ-ի բարձրիկի փոխարինում	15,000	15,000	15,000	15,000	15,000
ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	13,500	13,500	13,500	13,500	13,500
ՓՏ-ի յուրի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
ԱՓՏ-ի յուրի և գորիջի փոխարինում					25,000
ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում					80,000
ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում					70,000
Վազբաչափի շարժաբերի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ					
Բաշխիչ տուփի հիմնական նորոգում					
Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում					
Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում					
Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում					
Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում					
Բաշխիչ տուփի դիաֆրագմաների փոխարինում					
Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում					
Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում					
Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում					
Բաշխիչ տուփի երկրորդային փոխարինում					
Բաշխիչ տուփի բարձրիկի փոխարինում					
Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում					
Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում					

Կարողանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	1,000			
Կարողանային լիսեռի խաչումի փոխարինում	1,000			
Բաշխիչ տուփի կայունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10,000			
Տվիչի փոխարինում	10,000			
Բաշխիչ լիսեռի ատամնամսի փոխարինում	10,000			
Կարողանային լիսեռի միջին կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	10,000			
6. Առջևի և հետևի կամրջակներ				
Առջևի կամրջակի կիսաստնում հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	20,000	15,000	15,000
Առջևի կամրջակի կիսաստնում ատանցքակալի փոխարինում	13,000	18,000	13,000	13,000
Առջևի կամրջակի կիսաստնում ատանցքակալի խտաբուկների փոխարինում	5,000	5,000	5,000	5,000
Կամրջակի յուղի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000
Առջևի կամրջակի դիֆերենցիալ փոխարինում	35,000	40,000	38,000	3,800
Հետևի կամրջակի կիսաստնում հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	20,000		
Հետևի կամրջակի կիսաստնում ատանցքակալի փոխարինում	13,000	18,000		
Հետևի կամրջակի կիսաստնում ատանցքակալի խտաբուկների փոխարինում	5,000	5,000		
Հետևի կամրջակի բռունցքի գնդան հիմնարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	15,000	12,000		
Հետևի կամրջակի դիֆերենցիալ փոխարինում	25,000	25,000		
Հետևի կամրջակի բլրկավորման ուսանկարգի նորոգում	50,000	50,000		
Կամրջակի տվիչի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000
7. Կախոց				
Ջրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	40,000	45,000	40,000	40,000

Ձախ կամ այլ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	12,000	15,000	14,000	14,000
Առջևի անվակումների առանցքակալների փոխարինում	12,000	15,000	13,000	13,000
Առջևի անվակումների հանում և տեղադրում կամ փոխարինում	12,000	15,000	13,000	13,000
Հետևի անվակումների հանում և տեղադրում կամ փոխարինում	12,000	15,000	13,000	13,000
Հետևի անվակումների առանցքակալների փոխարինում	12,000	15,000	13,000	13,000
Անվակումների համասեռի և հերոյսի փոխարինում (մեկ անիվի համար)	4,000	4,000	4,000	4,000
Ձախ կամ այլ հողակապի խտաբույսերի փոխարինում	8,000	8,000	8,000	8,000
Ձախ կամ այլ հողակապի առանցքակալների փոխարինում	13,000	15,000	13,000	13,000
Տնցամեղմիչի թասակի փոխարինում	5,000	6,000	6,000	6,000
Առջևի զայանակի փոխարինում	6,000	6,000	6,000	6,000
Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	8,000	10,000	8,000	8,000
Հարվածամեղմիչի վրանների փոխարինում	4,000	4,000	4,000	4,000
Ներքին լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	9,000	15,000	10,000	10,000
Ներքևի լծակի վրանների փոխարինում 1 հատ	6,000	8,000	7,000	7,000
Ներքևի լծակի հերոյսի փոխարինում	2,000	2,000	2,000	2,000
Խոջևի այլ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	8,000	15,000	8,000	8,000
Միջին ձգանի հանում և տեղադրում	8,000	15,000	8,000	8,000
Հարվածիչի (բարձիկի փոխարինում)	2,000	4,000	2,000	2,000
Էերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	9,000	8,000	12,000	12,000
Էերևի լծակի վրանների փոխարինում 1 հատ	9,000	9,000	8,000	8,000
Էերևի լծակի հերոյսի փոխարինում	2,000	2,000	2,000	2,000

Հետևի վերևի թվակի վրանի փոխարինում 1 հատ	9,000	9,000	8,000	8,000
Գնդե հողակալների պատյանի փոխարինում	3,000	3,000	3,000	3,000
Գնդե հողակալների փոխարինում	15,000	15,000	15,000	15,000
Ծայրակալների հանում և տեղադրում	9,000	9,000	9,000	9,000
Կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	12,000	12,000	12,000	12,000
